

ՆՈՐԻՑ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱԳՈՒ «ՔՆՆԻԿՈՆԻՆ» ՄԱՍԻՆ

Պրոֆ. Գ. Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վերջին տարիներին Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտական աշխատակից Արտաշես Մաթևոսյանը հանդես եկավ մի շարք հոդվածներով՝ նվիրված Անանիա Շիրակացու «Քննիկոնին» ու դրա բովանդակությանը¹։ Հոդվածներին ծանոթանալուց հետո բացահայտվեց, որ այդտեղ ոչ մի նորություն չկա։ «Քննիկոնը», որը ներկայացվում է որպես հայտնագործություն, Անանիա Շիրակացու՝ գիտության պատմությանը հայտնի տոմարական աշխատությունն է։ Այդ աշխատության բովանդակությունը ուսումնասիրվել ու շարադրվել է տոմարագետների և աստղագետների մենագրական աշխատություններում²։ Դրան, անդրադարձել ենք նաև մենք մեր «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում» (Երևան, 1959 թ.) մենագրության մեջ։ Որոշ հարցեր, կապված Գրիգոր Մադիստրոսի նամակի հետ, իրենց ճիշտ լուսաբանություն են ստացել «Պատմա-բանասիրական հանդեսի» 1980 թ. № 2-ում տպագրված «Անանիա Շիրակացու «Քննիկոնը» խորագրով հոդվածում»։

1981 թ. «Պատմա-բանասիրական հանդեսի» 2-րդ համարում Ա. Մաթևոսյանը հանդես է եկել մի նոր հոդվածով՝ «Նորից Շիրակացու «Քննիկոնին» մասին»։ Հոդվածը սկսվում է այսպես. «Պատմա-բանասիրական հանդեսի 1980 թ. 2-րդ համարում պրոֆ. Գ. Բ. Պետրոսյանը հանդես եկավ Անանիա Շիրակացու «Քննիկոնին» նվիրված մեր հոդվածի դեմ։ Բանն այն է, որ մինչ այդ, տասնամյակներ շարունակ Անանիա Շիրակացին մաթեմատիկական, տոմարական, աստղաբաշխական և այլ գիտական աշխատությունների հեղինակ էր համարվում, իսկ այժմ նա ներկայացվում է որպես ուսումնական մի ամբողջ համակարգի ստեղծող հայ իրականության մեջ, լուսավորիչ, հեղինակ «Քննիկոն» համայնագիտարանի, որի մեջ մտնում են հիշյալ բնագավառների Շիրակացու անվամբ հայտնի երկերը լրացված, ամբողջացված և ճշգրտված»³։

Այս պարբերության առնչությամբ մատնացույց է անում ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» և «Պատմա-բանասիրական հանդես» պարբերականներում տպված իր հոդվածները։ Գիտական տեսակետից դրանք ոչինչ չեն ավելացնում, իսկ որոշ հարցեր արմատապես խեղաթյուրում են։ Ա. Մաթևոսյանը, իրիանակ անմիջապես դիմելու սկզբնաղբյուրների քննարկմանը, ապացուցելու համար, որ «Քննիկոնը» դասագիրք է, ընթերցողի ուշադրությունը շեղում է հիմնական խնդրից, շոշափելով այնպիսի հարցեր, որոնք քննարկվող խնդրի հետ ոչ մի առնչություն չունեն։ Որպես օրինակ կարելի է մատնանշել Մաշտոցի անվան Մատենադարանի № 2679 ձեռագրի նկարագրությունը և այլ հարցերի քննարկումը։

¹ Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1974, № 7, էջ 65—76. № 8, էջ 71—81; 1979, № 9, էջ 78—86; 1980, № 1, էջ 89—95; «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2, էջ 163—178; 1981, № 2, էջ 223—239։

² Բ. Ե. Ռոմանյան. Հայ աստղագիտության պատմություն. Երևան, 1964, էջ 53—54; Ա. Գ. Արարահայան. Շիրակացու մատենագրությունը. Երևան, 1944, էջ 106; Հ. Ս. Բալասանյան. Օրացույցի պատմություն. Երևան, 1970, էջ 66—67։

³ «Պատմա-բանասիրական հանդես». 1981, № 2, էջ 223։

Մենք առաջին հերթին մեջ կբերենք երկու պատմիչների վկայությունները «Քննիկոնի» վերաբերյալ, հետո կգիմենք Գրիգոր Մազիստրոսի նամակին:

«Քննիկոնի» մասին առաջին վկայությունը տալիս է Հովհաննես Դրասխանակերտցին: Նա գրում է. «Իսկ Անաստասայ հայրապետին հոգացեալ վասն Հայկական տոմարի, զի թերևս անշարժ դնա ըստ այլոց աղգաց մարմասցէ յօրինել. զի միշտ անշարժ լինիցին տօնք տարեկանաց կամ յեղափոխ եղանակք ժամանակաց: Վասն որոյ և առ ինքն զԱնանիայ Անեցի կոչեալ, որ բանիբուն այնմ արուեստի էր հմուտ, հրամայէ նմա ստեղծագործել զխնդրելին իւր: Իսկ նորա ջան ի վերայ եղեալ և ըստ բոլոր աղգաց պայմանի՝ անշուշտ յօրինեալ զկարգ Հայկական տոմարի. զի բարեձևագործեց ոմանց և զմերս կշռադատեալ՝ մի՛ կարոտասցուք գալ և զուգաւորութիւն Հռովմայացւոց: Եւ մինչդեռ խորհէր մեծն Անաստաս ժողովօք եպիսկոպոսաց զեղեալսն հաստատել՝ վախճան կենաց նմա ժամանէր, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց: Անփոյթ զկնի եկելոցն այսմիկ արարեալ՝ և զառաջին մշտախաղաց շրջագայեալ կարգն կալեալ»⁴:

Երկրորդ պատմիչը Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն է, որը գրում է. «Իսկ Անաստաս խորհեալ Հայաստանեայցս կարգել տոմար անշարժ ըստ այլոց աղգաց՝ և հրամայէ Անանիայի Շիրակացւոյ կարգել զքրօնիկոնն հրաշաղան, լորում զտոմարս մեր կարգեաց անշարժ: Եւ Անաստասայ խորհեալ ժողովով և եպիսկոպոսօք հաստատել զքրօնիկոնն՝ և վախճանի՝ կացեալ յաթոռն ամս 2 (6)»⁵:

Նշված աղբյուրները որոշակի վկայում են, որ Անաստաս կաթողիկոսի հանձնարարությամբ Անանիա Շիրակացին կազմում է անշարժ տոմար, ինչպես նաև այդ տոմարը հռոմայեցիների և այլ ազգերի տոմարների հետ զուգադրելու համար ԵԼԲ աղյուսակ, որ հասել է մեզ: Շիրակացու այս տոմարական աշխատությունը հայ մատենագրության մեջ հայտնի է «Քննիկոն» կամ «Քրոնիկոն» անվան տակ: Այդ տոմարը Անաստաս կաթողիկոսի մահվան պատճառով չի հաստատվում, նրա հաջորդները ալդ հարցի վրա ուշադրություն չեն դարձնում:

Այժմ անցնենք պատմիչներից Մաթևոսյանի կատարած մեջբերումներին և իր եղրակացություններին: Նա գրում է. «Հայոց շարժական տոմարի փոխարեւ ուրիշ աղգերի նման անշարժ տոմար ունենալու համար Անաստաս կաթողիկոսը իր մոտ է կանչում Անանիա Շիրակացուն և նրան հանձնարարում այդ գործը: Շիրակացին, որ հմուտ էր այդ արվեստին, մեծ ջանքերի գնով հորինում է հայոց անշարժ տոմարը՝ «Եւ մինչդեռ խորհէր մեծն Անաստաս ժողովօք եպիսկոպոսաց զեղեալսն հաստատել՝ վախճան կենաց նմա ժամանէր, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց: Անփոյթ զկնի եկելոցն այսմիկ արարեալ՝ և զառաջին մշտախաղաց շրջագայեալ կարգն կոչեալ»⁶:

Ինչպես տեսանք, Դրասխանակերտցուց կատարված մեջբերումը մեր կողմից շատ տեղ չի զբաղեցնում ու տալիս է հարցի ամբողջ իմաստը, ինչպես Մաթևոսյանը նրա վկայությունը ամբողջությամբ չի բերում, այլ բավականանում է վերջին մասով: Դրանով Մաթևոսյանը ցանկացել է «զեղեալսն» առաջին պլանի վրա դնել, ընթերցողի ուշադրությունը հրավիրել, որովհետև այդ բառի կամայական մեկնաբանության հետ է կապվում պատմիչի վկայության աղավաղումը: Այնուհետև Մաթևոսյանը շարունակում է. «Անաստասի հաջորդ Իսրայելը, որի մասին Մ. Օրմանյանը նկատում է, թե «անվանեն ավելի բան մը չեն ավանդեր պատմիչները», ընթացք չի տալիս այդ ձեռնարկությանը և տոմարը

4 Տովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցուց Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 92—93:

5 Ստեփանոսի Տարոնեցուց Ասողիկան Պատմութիւն տիեզերական. Սպբ, 1885, էջ 99:

6 «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 2, էջ 224:

չի հաստատում: Թե ինչու, պատասխանը տալիս է Ասողիկը. որովհետև Անաստասի պատվերը միայն տոմարը չէր և Շիրակացին միայն տոմարը չէր ներկայացրել: Ասողիկը ոչ միայն հատնում է, որ տոմարը կարգված էր մի մատյանի մեջ, այլևս տալիս է մատյանի անունը՝ «Քննիկոն»: Քանի որ «Քննիկոնի» մեջ հայոց անշարժ տոմարից բացի եղել են նաև այլ նյութեր, ուրեմն եպիսկոպոսական ժողովով պետք է հաստատվեր այդ ամբողջը, «զեղեալան», բայց կաթողիկոսի մահվան պատճառով «Քննիկոնը» չի հաստատվում⁷:

Ինչպես երևում է, այստեղ Ա. Մաթևոսյանը խուսափում է մեջ բերել Ասողիկի վկայությունը «Քննիկոնի» մասին և կամայական մեկնաբանություններ անելով եկրակացնում է, որ բացի հայկական անշարժ տոմարից «Քննիկոնի» մեջ դեռ եղված են եղել իր ժամանակի բոլոր գիտությունների վերաբերյալ նյութեր: Նա այդ եզրակացությունը բխեցնում է պատմիչի վկայության մեջ դործադրված «զեղեալան» բառից. մինչդեռ այդ բառի տակ պետք է հասկանալ տոմարի հետ կապված նյութերը, այդ թվում նաև աղյուսակները:

Որ «Քննիկոնը» Անանիա Շիրակացու տոմարական աշխատության վերնագիրն է, ապացուցում է հենց ինքը՝ Ա. Մաթևոսյանը իր հոդվածում: Նա գրում է. «Քննիկոն» է կոչվել հռոմեական Փոքր կամ Նոր թվականը կամ տոմարը, ի տարբերություն Ավագ կամ Իսկու թվականի: Մատենադարանի № 1999 (XII դ.) ձեռագրում, Շիրակացու գործերից մեկում կարգում ենք. «...Աւագ թուականէ, որ է Բուն թուական Հռոմի, կալ Բուն թուականն, ՇԼԲ ի բաց երթ, և որ ի խոնարհ մնա, այն կոչի «Քննիկոն» որ է Նոր թուական:

Դարձեալ կալ ղհայ թուականն գնորն, ՅԴ ի վերա բեր Փոքր թուականէ Հռոմի, որ կոչի Քննիկոն...»⁸: Այնուհետև. «Հետագայում «Քննիկոն» է կոչվել նաև Հովհաննես Սարկավագի տոմարը. «Սա (Սարկավագը—Ա. Մ.) արար անշարժ տօմար Հայոց որ «Քննիկոն» կոչի, և Փոքր թուական արար և ի միաբանութիւն ամենայն աղգաց տոմարի ընդ Հայոց», եթե, իհարկե, Դավիթ Բաղրիշեցին այն չի շփոթում Շիրակացու «Քննիկոնի» հետ»⁹:

Ա. Մաթևոսյանը փորձում է բացատրություն տալ, թե ինչու Անաստասի հաջորդները չհաստատեցին Անանիա Շիրակացու անշարժ տոմարը:

«Մեր կարծիքով պատճառը կաթողիկոսի մահը չէր, որովհետև կաթողիկոսի մահը այստեղ չէր նշանակում կաթողիկոսության վախճան: Ինչու Անաստասից հետո եկողները անուշադրության մատնեցին համազգային այդ կարևոր ձեռնարկությունը, մի՞թե անշարժ տոմարը Անաստաս Ակոռեցու կարիքների համար էր ստեղծվել: Մինչդեռ ժամանակները շատ նպաստավոր էին, Գրիգոր Մամիկոնյանի իշխանության օրոք (661—685 թթ.) խաղաղության տարիներ էին Հայաստանում: Ուրեմն «Քննիկոնի» շուրջ խորը և լուրջ տարածանություններ են եղել՝ կապված նրա բնույթի, պարունակության, նպատակի և այլ հանգամանքների հետ»¹⁰:

Առաջ քաշել տարածանությունների հարցը կապված տոմարի բնույթի, պարունակության, նպատակի և այլ հանգամանքների հետ, միանգամայն անհիմն է: «Քննիկոնը», ինչպես ցույց է տվել ինքը՝ Մաթևոսյանը, տոմարական աշխատության վերնագիրն է. «Քննիկոնը» բացի տոմարական նյութից ու աղյուսակներից ուրիշ ոչինչ չի պարունակում:

Միակ հարցը, որի շուրջը կարող էին լինել տարբեր կարծիքներ, դա այն է, թե պետք էր արդյոք շարժական տոմարից անցնել անշարժ տոմարին, թե ոչ: XI դարում, երբ Հովհաննես Իմաստասերը հիմնում է անշարժ տոմար, շարժական տոմարը շարունակում է իր գոյությունը:

7 Նույն տեղում, էջ 224—225:

8 ՏՆՍ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1974, № 7, էջ 77:

9 Նույն տեղում:

10 «Պատմա-բանասիրական հանդես» 1981, № 2, էջ 225:

Այժմ դիմենք Գրիգոր Մագիստրոսի նամակին՝ ուղղված Պետրոս կաթողիկոսին, որովհետև այդ նամակի վերնագրում տեղ է գտել «Մեծ քննիկոն» անվանումը: Այնտեղ ասված է. «Առ տէր Պետրոս ի ժամանակի խոժան յառնելոյ ի քաղաքին ի վերայ նորա. բան մխիթարական և հարցումն Անանիայի գրոց Շիրակայնոյն, զոր մեծ Քննիկոնն անուանեն»: Նա միաժամանակ նշում է. «Իսկ դու ո՞վ վսամական և սրբազանութեանցն նախապետական, զարիական սերտութեան զմտաւ ածցես և զարդարութեանն ողջախոհութիւն, քանզի այսու զքեզ մշտափայլ տեսանեմք, և մի՛ ինչ ի քում մակաւասար մակամտածութիւնս թեակոխեացիս, խոկալով տրտմական կամ եթէ տխրութեան ինչ ի քեզ կրել ախտս. քանզի յորժամ տկարանամք, յայնժամ զօրանամք. և հոգին ի թիկունս հասանէ տկարութեան մերում... միայն պարտ է աւագ առջ շուրջ հայել և ժամանակի ծառայել, ոոպէս ումմն իմաստնոյ քան ղայսոսիկ թուկաւ...»

Փոխան Յիսուսի, համարձակիմք, միշտ սովորեալ յառատաձիր պարգևս, զկարևորսն և զպիտանացունս յարատեական բաշխելով քեզ, որ ոչդ երբէք դանդաղիս զգիրս Անանիայի Շիրակայնոյ, որ բազում աշխատութեամբ և յաժաշու խոնջմամբ հաւաքեալ ի բազմազան և յոքնաբեղուն մատենից, յորում և ենթակայացեալ են ոչ միայն քառիցն արհեստք, այլ բոլոր էական խոկմունս, որ են այժմ ի տան տէրունեան, զոր նախ քան զքեզ խորթնացեալ և թագնի ընդ գրուանաւ ծածկէին, զոր և ինքն իսկ, որ մատենագրեաց զայդոսիկ յառաջնում իւրոյ տրամաբանութեան բազում տարակուսանս և կեղեքականս սակս մերոյ ազգային անփոյթ առնելոյ զայդպիսի գործառնութիւնս, յորում մթերեալ են տոգորք աստուածային և ենթակայացեալ ամենայն արհեստի մակացութեան և նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն, որք են ի տարրորդ քանակէ տարակացեալք, իսկ երկրաչափութեանն և աստեղաբաշխութեանն, որք են ի շարունակ քանակէ, և զկնի այսոցիկ յարամանեալք արհեստք և մակացութիւնք մատենագրութիւնք և գրէ եթէ ամենայն բոլոր վարժումն հռետորական, թէպէտ և մասնաւոր զփոշտեսակսն՝ զօրէն գործասէր մեղուի ամբարեաց ի մեղուանոցի այդր ի բաղմամբ մատենագրից Քաղզէացոց և Յունաց և ամենայն ազգաց առ ի ծանօթ լինելոյ, որք նախ քան զայնոսիկ հաւաքեալն մատենանս մակացու եղեալ իմաստասիրութեան. քանզի որք ոչ նախուսուկրթեալք են, բոլորովին ոչ գոյ հնար թեակոխել զայնպիսի աստուածաբանութիւնս. քանզի պարտ է նախ ի բնաբանականէն յուսումնականն ամբառնալ և անդուստ աստուածաբանականն...

Եւ արդ՝ քանզի սակս մատենին Անանիայի եղև յիշատակ իմաստասիրելոյս մեզ, բե՛ր ոչինչ խրթին և անյայտաբար. կամիմք զհայցուած մեր ծանուցանել մերոյ լուսաւորչիդ. ի բազմաց անփոյթ եղելոյ այսպիսի գործառնութիւնք և հանդէսք, որ ոչ երբէք ի ստաղին վարժելոց գրամարտկոսաց և քերդողաց հնացեալ, ի մոռացումն այսպիսոյ մատենի ոչ միայն եղև անկանել, այլ և բազմաց, որպէս ի մերոյն Մովսիսէ ուսեալ, գտեալ գտաք, և յայդմ մատենի մակագրութեան վերծանեաք: Քանզի Արամեան սերի հպարտութիւն և անամոք բնութիւն և խստապարանոց բարս ոչ ստորակայի յայսոսիկ կըրթութիւնս յարատեական հաւանել, կամ եթէ ոչ փոյթ, որք պետականին հասին բախտի, մեծարու լինել և խուզել զխոհմական արհեստս ի զարդ քարգոնոսական ապարանին, որպէս մեծ Փտղմէոսն այն և որք այլք այդպիսիք. և զի բազում աշխատութեամբ խոնջեալ և տագնապեալ, մինչ տակաւին յիմում անտիականն ելով տիս, հազիւհազ մակացու այսմ եղեալ, սուղ ինչ էական հասեալ, ըստ որումն են յԱրաբացոց և Քաղզէացոց և Յունաց, ոչ դանդաղեցաւ քննութեամբ զփորձ առնուլ:

Եւ խնդրեմք ի քումմէ լուսափայլութենէդ զնորագոյնն մատեան շնորհել մեզ, զի այժմ մերձ առ ծերութիւն հասեալ եմք, և դիւրին վերծանեալ հասցուք ըստ կարողութեան, զի մի՛ յերկրոցունց կողմանցն ունիցիմք մարտակցութիւնս՝ տեսութեան և մտածութեան, քանզի լուսով քո տեսանեմք զլոյս: Ապա եթէ ոչ այսոքիկ հաճոյ թուեսցի քումդ աստուածապետական խշխանութեանդ, զոր և

կամեսցի, ասն իբրև յաստուածոստ պարգև համարեալ է մեղ. ողջ լե՛ր. փոխան Աստուծոյ»¹¹,

Ինչպես տեսանք, «Քննիկոնը» Անանիա Շիրակացու տոմարական աշխատության վերնագիրն է։ Գրիգոր Մագիստրոսի նամակի վերնագրում գրված է. «...և հարցումն գրոց Շիրակայնոյն, զոր մեծ «Քննիկոն անուանեն»։ Առաջին մասը որոշակի նշում է, որ հարցում է արվում Շիրակացու գրածների—աշխատությունների մասին, իսկ երկրորդ մասը ցույց է տալիս, թե այդ աշխատությունները ինչպես են անվանել։ Եթե խոսքը «Քննիկոնի» մասին լիներ, Մագիստրոսը ամբողջ նամակում գոնե մեկ անգամ, բացի վերնագրից, կնշեր «Քննիկոնի» մասին, նման բան գոյություն չունի։ Մագիստրոսը իր նամակում վեց անգամ գործադրում է մատչյան բառը, այդ նշանակում է՝ խոսքը գնում է Շիրակացու աշխատությունների մասին, որոնք զետեղված են այդ մատչյանի մեջ։ Մեջ ենք բերում այդ նշումները.

1. Հավաքեալ ի բաղմազան և յոքնաբեղուն մատենից
2. որք նախ քան զայնոսիկ հավաքեալն մատեանս
3. Եւ արդ քանզի սուկս մատենին Անանիայի եղև յիշատակ իմաստասիրելոյս մեղ
4. ի մոռացումն ալսպիսոյ մատենի ոչ միայն եղև անկանել
5. Եւ յայդմ մատենի մակագրութեան վերծանեաք
6. Եւ խնդրեմք ի քումմէ լուսափայլութենէդ զնորագոյնն մատեան շնորհել մեղ։

Մագիստրոսի նամակում նշվում են Անանիա Շիրակացու գիտական աշխատությունների բնագավառները, այդ թվում և քառիցն արհեստ. թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն և աստղագիտություն։ Տոմարագիտության մասին նամակում խոսք չկա։ Այդ բոլորը որոշակի կերպով ցույց է տալիս, որ նամակի վերնագրում «Մեծ քննիկոն»-ը ավելացված է հետազայում, գրիչների կամ խմբագիրների կողմից։

Ա. Մաթևոսյանը «Քննիկոնի» պարունակությունը պարզելու նպատակով Գրիգոր Մագիստրոսի նամակից մեջ բերելով ամբողջական հատվածներ, նշում է. «Քննիկոնի մասին Մագիստրոսի տեղեկությունները այնքան հստակ, հավաստի և հասկանալի են, որ զարմանալի է, թե ինչպես հայ բանասիրությունը ըստ էության չի անդրադարձել սույն նամակին»¹²։

Սա նշանակում է, որ Ա. Մաթևոսյանը առաջին բանասերն է, որ ըստ էության անդրադառնում է Գրիգոր Մագիստրոսի նամակին։ Դիմենք Ա. Մաթևոսյանի «Քննիկոնի» մասին գրած իր առաջին հոդվածին։ «Մագիստրոսի նամակը մասամբ ճիշտ է ընկալել Գ. Պետրոսյանը. «Գրիգոր Մագիստրոսն էր, որ անհայտությունից լույս աշխարհ հանեց Շիրակացու մաթեմատիկական աշխատությունները, որոնք դարձան հայկական դպրոցներում և ճեմարաններում մաթեմատիկայի դասավանդման հիմք։ Մագիստրոսի դպրոցում դասավանդումը կատարվում էր հայերեն լեզվով, իսկ որպես դասագրքեր օգտագործվում են թարգմանականների հետ միասին նաև ինքնուրույն աշխատանքներ։ Մագիստրոսն այդ աշխատանքներից բարձր է գնահատում Անանիա Շիրակացու «Մեծ Քրոնիկոնը» (Մագիստրոսի մոտ «Մեծ Քննիկոն»—Ա. Մ.)»¹³։

Ինչպես պարզ երևում է, Գրիգոր Մագիստրոսի նամակին անդրադարձել են քառորդ դար Մաթևոսյանից առաջ։ Հիմնականում ճիշտ գնահատելով նրա աշխատանքները, «Քննիկոնի» հարցում սխալ է կատարվել։

Ա. Մաթևոսյանը, երկու էջի վրա Գրիգոր Մագիստրոսի նամակի առնչությունը բերկար մեկնաբանություններ անելուց հետո, իր հոդվածի առաջին մասը եղրափակում է այսպես. «Անանիա Շիրակացին, համագործակցելով հայոց հո-

11 Գրիգոր Մագիստրոսի թղթերը. Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8—10։

12 «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 2, էջ 227։

13 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1974, № 7, էջ 67։

գետը առաջնորդի հետ, հստակ ծրագրով ու նպատակով ստեղծել է հայոց բարձրագույն կրթության դասագիրք «Քննիկներ», որի նպատակն էր լուսավորել հայրենիքը բնական գիտությունների արմատավորմամբ»¹⁴։ Նման եղրակացություն համար Ա. Մաթևոսյանը ոչ մի հիմք չունի։

Պատմիչների վկայությունը որոշակի կերպով անացուցում է, որ «Քննիկներ» Անանիա Շիրակացու կողմից պատրաստված անշարժ տոմարական աշխատության վերնագիրն է։

Ա. Մաթևոսյանն իր հոդվածի երկրորդ մասում (որը կազմում է ամբողջ հոդվածի երկու երրորդը) փորձում է պատասխանել մեր հոդվածում արված եղրակացություններին։ Մեջբերումներ անելով մեր աշխատությունից, որը լույս է տեսել 1959 թ., նա գրում է. «Գ. Պետրոսյանը այնքան համոզված էր, որ Մագիստրոսի սույն նամակում հիշված «Մեծ Քննիկներ» և Ստեփանոս Ասողիկի «Պատմության» մեջ հիշված «Քրոնիկներ» նույն դասագրքերն են, որ առանց դուշն ինչ տատանման «Մեծ Քննիկներ» մկրտում է «Մեծ Քրոնիկներ» անվամբ։ Ինչպես տեսնում ենք, Մագիստրոսի նամակը քսանհինգ տարի առաջ լավ լուսաբանություն է ստացել պրոֆ. Գ. Պետրոսյանի գրչի տակ, հիմա է, որ մթագնում է»¹⁵։

Ա. Մաթևոսյանը, փոխանակ լուրջ կերպով ուսումնասիրելու քննարկվող հարցի հետ կապված աղբյուրներն ու ուղղում մտցնելու Գ. Պետրոսյանի եղրակացության մեջ, վերցրել է Գ. Պետրոսյանի եղրակացությունն ու ներկայացնում է որպես նոր հայտնագործություն։

Արտաշես Մաթևոսյանը ոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում համոզելու քննարկողին, որ Գրիգոր Մագիստրոսի նամակի խորագրում եղել է «Մեծ Քննիկներ»։ Այս կապակցությամբ նա գրում է. «Որ սույն նամակի խորագիրը և բովանդակությունը ներդաշնակ են, երևում է վերոհիշյալ մատենագիրներից առնված վկայությունների և նամակի համեմատությունից».

Հովհաննես Դրասխանակերտցի	Ստեփանոս Ասողիկ	Գրիգոր Մագիստրոս
Անաստաս կաթողիկոսի պատվերով Անանիա Շիրակացին գրում է հայոց անշարժ տոմար. Շիրակացու գրածը կաթողիկոսարանում հաստատելու օրերին մահանում է կաթողիկոսը և անուշադրության են մատնում Շիրակացու գործը։	Անաստաս կաթողիկոսի պատվերով Անանիա Շիրակացին գրում է «Քրոնիկներ», որի մեջ և հայոց անշարժ տոմար. «Քրոնիկներ» կաթողիկոսարանում հաստատելու օրերին մեռնում է կաթողիկոսը։	Անանիա Շիրակացին գրել է «Մեծ Քննիկներ»։ «Քննիկներ» մոտացության է տրվել և արգելված է կաթողիկոսարանում։

Այս ամենը վկայում են, որ Մագիստրոսի նամակի խորագիրը և բովանդակությունը համապատասխան են իրար և կասկածելը անտեղի է»¹⁶։ Ա. Մաթևոսյանը համեմատության մեջ է դնում ոչ թե պատմիչների և Գրիգոր Մագիստրոսի վկայությունները, այլ իր արած սխալ եղրակացությունները։

Նա իր հոդվածն ավարտում է այսպես. «Ամփոփենք։ «Քննիկներ» Անանիա Շիրակացու հիմնական աշխատությունն է, հայ բաղմագարյան մատենագրության եզակի կոթողներից մեկը... Այսօր վերստին հայտնվեցին ոչ միայն «Քննիկներ» գոյության գաղափարը, այլև նրա որոշ մասերը, մասունքները և

¹⁴ «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 2, էջ 229։

¹⁵ Նույն տեղում, էջ 230։

¹⁶ Նույն տեղում, էջ 231—232։

րեկորները, և նրա ամբողջացման աշխատանքը հայագիտության կարևոր խնդիրներից մեկն է:

Անանիա Շիրակացու «Քննիկոնը» պետք է վերականգնել... «Քննիկոնը» լրիվ վերստեղծել, հավանաբար, անհնարին կլինի... այնուամենայնիվ պետք է վերականգնել Անանիա Շիրակացու մեծ «Քննիկոնը»՝ հայ դպրության Զվարթնոցը»¹⁷:

Այս բոլորը մոլորության արդյունք է: «Քննիկոնը» Անանիա Շիրակացու տոմարական աշխատությունն է: Այդ տոմարական աշխատությունը հասել է մեզ:

Միջնադարյան բարձրագույն դպրոցներում և համալսարաններում դասավանդվել են «Յոթ աղատ արվեստներ», որոնք բաղկացած էին երկու հիմնական բաժիններից: Առաջին բաժնի մեջ մտնում են՝ քերականությունը, ճարտասանությունը և գրալեկտիկան: Երկրորդ բաժնի մեջ՝ թվաբանությունը, երաժշտությունը, երկրաչափությունը և աստղաբաշխությունը: Առաջին բաժնի դասընթացներին տալիս էին եռյակ (trivium) անունը, իսկ երկրորդ բաժնի դասընթացներին՝ քառյակ (quadrivium) անունը: Այդ յոթ արվեստների համար ստեղծվել է մի տերմին՝ «նեքշրջական»՝ ժամանակի համայնագիտության իմաստով:

ЕЩЕ РАЗ О «КРИТИКОНЕ» АНАНИИ ШИРАКАЦИ

Проф. Г. Б. ПЕТРОСЯН

(Резюме)

В статье рассматривается история возникновения проекта армянского неподвижного календаря «Критикон», созданного Ананией Ширакаци во второй половине VII века. В этой связи отвергается положение статей А. С. Матевосяна о том, будто «Критикон» является учебником, содержащим все науки своего времени (см. «Вестник общественных наук» АН АрмССР, 1974, № 7,8; 1979, № 9; 1980, № 1; «Историко-филологический журнал», 1979, № 2; 1981, № 2).

¹⁷ Նույն տեղում, էջ 238: